ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԵԼԹ ՄԵԹԱԼ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/72 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	<<ՄԵԼԹ ՄԵԹԱԼ>> ՍՊԸ	Մարմնամարզական պատ - Հենարանի նյութը - պինդ սոճի, աստիճանաձողի նյութը-պինդ հաճարենի, թխկի կամ պինդ կեչի, բարձրությունը՝ 2900-3000մմ, պատի լայնությունը- 900մմ, վերին հատվածի տարածքում խորությունը-280 մմ և 140 մմ մնացած բարձրության երկայնքով, ուղղահայաց սյուների պրոֆիլը 140*40մմ, ստենդի հաստությունը - 40մմ: Աստիճանաձողի տրամագաիծը – 40մմ, ձողերի միջև հեռավորությունը – 180մմ, առավելագույն ծանրաբեռնվածությունը -120 կգ ներառյալ, ստորին ձողը ամրացրած է հատակից 150մմ բարձրության, իսկ վերին ձողը 80-100մմ առաջ է մյուս աստիճանաձողերի համեմատ, վերին մասը հարմարեցված է՝ որպես ձողան օգտագործելու համար, վերին ձողանի հեռավորությունը դեպի ներքևի աստիճանաձող պետք է լինի 400 մմ հեռավությամբ՝լաքապատված բարձրորակ խոնավակայուն և չսահող լաքով: Մարմնամարզական մագլցման սարքավորումների ձողերի խաչմերուկի չափերը ներկայացված են նկար 1-ում: Աստիճանաձողերի ամրացումը չպետք է լինի մեխով կամ հեղյուսով: Ամրացումները բարձորակ և ամուր դետալներով, նախատեսված մարմնամարզական պատի և դրա առավելագույն ծանրաբեռնվածության հանրագումարին դիմակայելու համար: Մինչ մատակարարումը՝ ապրանքի նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նմուշը /նկարը/ կցվում է: Նշված ապրանքի համար երաշխիքային

		ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների /բաշխման ցանկին համապատասխան/ իրականացվում է Մատակարարի կողմից: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Եթե ապրանքը արտադրվում է ՀՀ-ում, ապա Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական նյութերի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Եթե ապրանքը ներմուծվում է արտերկրից, ապա Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

МЕЛТ МЕТАЛ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/72 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
2		